

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ÖZEL GETRONAGAN ERMENİ LİSESİ

2016-2017





Արշակ Չոպանեան
Գրագէտ



Հրաչեայ Աճառեան
Լեզուարան



**Ես դպրոցներէն կը սպասեմ
ազգին փրկութիւնը**
Ներսէս Պատրիարք
Հիմնադիր
Ազգ. Կեդրոնական Վարժարանի




Երուանդ Մանուկեան
Մանրեաբան




Տ. Մրմաբէշխանեան
(Երուխան) Գրող




Շաւարշ Միսաբեան
Լրագրող



Միսաբ Մեծարենց
Բանաստեղծ




Յակոբ Սիրունի
Բանասէր




Վահան Թեքեան
Բանաստեղծ



Տօքթ. Պ. Մանուկեան
Ուսուցիչ, Գրող




Յակոբ Մնձուրի
Գիւղագիր



Արամ Հայկազ
Արձակագիր



Գեղամ Բարսեղեան
Գրող



Վաքաւեան
Վահրամ, Գրող



Շահմուրատեան
Արմենակ, Երգիչ




Սիրմուկեան
Լ. Զաւէն, Գրող




Բագարատ Թեւեան
Հրապարակագիր




Մկրտիչ Հաճեան
Տարրաբ., Հրապար.



Վարպիս Վարագեան
Տնտեսագէտ



Սարաֆեան
Նիկողոս, Գրող



Վարօ Սասունի
Գրող

Կը յիշենք զանոնք եւ դեռ քանի քանիները...

Հրաչ Չարդարեան
Մանուկ Ասլանեան
Տիրան Քրմոյեան
Անդրանիկ Մատոյեան
Գամբր Անտոնեան
Արա Պարթեւեան
Գառնիկ Ալիքսանեան
Արա Ակիսեան
Արա Գօշունեան
Սարգիս Քէչեան (Չանգու)
Արամ Փեհլիվանեան (Ա. Շաւարշ)
Աւետիս Ալիքսանեան
Վարդան Իմալեան
Հայկազուն Գալուստեան
Վարպիս ճանճիկեան
Գրիգոր Ֆրչըճեան
Գեղամ Քերովբեան-Իշքօլ
Նուրիան Ուզունեան
Պետրոս Չօպեան

Վիպագիր
Լրագրող
Տարրաբան, գրող
Ճարտարագետ
Գիտնական
Երգահան, խմբավար
Գիտնական
Լրագրող, փաստաբան
Լրագրող
Բանաստեղծ
Բանաստեղծ, քաղաքագետ
Գրագէտ
Արձակագիր
Բանաստեղծ
Բանաստեղծ
Բանաստեղծ
Բանաստեղծ
Ուսուցիչ, լրագրող
Ուսուցիչ, խմբագիր
Ճարտարապետ, գրող

Յակոբ Մոմճեան
Արմենակ Իփեկեան
ՕՆՆԻԿ Զիֆթե-Սարաֆ
Միքայէլ Ճամտանճեան
Արշակ Ալպոյաճեան
Ենփք Արմէն
Արմէն Կիրակ
Կարապետ Քիրքճեան
Ռաֆայէլ Ծիշմանեան
Վահրամ Թաթուլ
Պետրոս Չարոյեան
Արտաւազդ Արթ. Սիրմեան
Աշոտ Քէչեան
Հայկ Պերպերեան
Պօղոս Գեորգեան
Աւետիք Մետրոպեան
Վարուժան Քեօսեան
Վարդերես Գարակեօզեան
Հրայր Ղազարեան

Ճարտարագետ
Դերասան
Արձակագիր
Հրապարակագիր
Պատմաբան
Հրապարակագիր
Օփերայի երգիչ
Ուսուցիչ, տնօրէն
Նկարիչ
Բանաստեղծ
Գրագէտ
Պատմաբան
Լրագրող
Բանասէր
Ուսուցիչ, տնօրէն
Ուսուցիչ, տնօրէն
Լրագրող
Բանաստեղծ
Ճարտարագետ

ԿԵՂՈՆԱԿԱՆԸ ԱՆՑԵԱԼԵՆ ԴԵՊԻ ԱՅՍՕՐ

1391	Կառուցում Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ	1949	Տնօրէն՝ Ղազարոս Պալճեան
1876	Ամենափրկչեան Նախակրթարանին տեղը Կեղոնականի կառուցումը	1953	Տնօրէն՝ Զամբարձում Յարութիւնեան
1882	Հանգանակութիւն Ներսէս Պատրիարքի գլխաւորութեամբ	1963	Տնօրէն՝ Զրանդ Տէր Անդրեասեան
1884	Մահ հիմնադիր Ներսէս Պատրիարքի	1972	Օգնական տնօրէն՝ Յովհաննէս Կիրիւն
1885	Խնամակալութեան կազմ բարերար Մկրտիչ Եսաեանի գլխաւորութեամբ	1974	Տնօրէն՝ Պերճ Զալլըքման
1886	Բացում, Տնօրէն Մինաս Չերագ	1980	Տնօրէն՝ Սիլվա Գոյումճեան
1888	Տնօրէն՝ Չուիցերիացի Ֆիլիբէն	1983	Համակարգչի դասաւանդութիւն, լեզուի դասարանի բացում
1890	Տնօրէն՝ Յարութիւն Մոստիչեան	1991	Երկսեռ ուսուցում ընդլայնում դէպի քովի խան (400 աշակերտ)
1896	Քայքայում Պանքայի Դէպքէն վերջ, Խնամակալութեան շրջան → 1909	1995	Հիմնադիր Կարպիս Պալմուճեան '52
1909	Տնօրէն՝ Մարտիրոս Նալպանդեան դէպի Երոպա աշակերտ պետական կրթաթոշակով	1996	Արդիականացում գիտական աշխատանոցի
1913	Տնօրէն՝ Փրօֆ. Աստուածատուր Խաչատուրեան	1998	Միջնակարգի փակում 8 տարուայ պարտադիր ուսման հետեւանքով
1915	Խնամակալութեան Բ. շրջան → 1917	2000	Նախապատրաստական դասարան → 2005
1917	Տնօրէն՝ Գեղամ Գավաֆեան → 1927	2005	Լիսէի ուսման 4 տարիի բարձրացում, ընդհանուր նորոգում
1922	Տնօրէն՝ Վահան Թէքեան (3 ամիս)	2008	Ընդլայնում (250m ²) նոր բաժանմունքով
1927	Տնօրէն՝ Պետրոս Արուսի շէնքի նորոգութիւն, մարգարանի շինութիւն	2009	Խնամակալութեան ատենապետ՝ Յարութիւն Եպէօղլու
1933	Տնօրէն՝ Գրիգոր Սարաֆեան	2012	Կեղոնականի Հիմնադրութեան 125-ամեակը
1936	Երկսեռ ուսուցում → 1954	2015	Յարկ մը եւս նոր բաժանմունքէն (250m ²)...
1939	Տնօրէն՝ Ելիզ Գավուքճեան-Այվազեան	2015	Դանիէլ Վարուճանի ոգեկոչում՝ իր եղերական մահուան 100ամեակին... Համալսարանի մտից քննութեանց դասընթացքներու բացում՝ վարժարանին մէջ:



Կարպիս Պալմուճեան հիմնադրի ներկայացուցիչ



Խնամակալներ՝ Սիրոյ Սեղանի աշխատութեան ընթացքին



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՊԵՕՂՈՒԻ ԱՏԵՆԱԳԵՏՈՒԹԵԱՄԲ ԿԵՂՈՆԱԿԱՆԻ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝

Վարդէվառ Ճավաք, Մինաս Գաբուսուզ, Վաղարշակ Վ. Պիլիբսիմբէշեան, Արիս Թուրաչ, Լորան Արշալիր Մուրատօղլու, Արի Զաքարօղլու, Անթոնի Գարատայը, Տօթթ. Վարդգէս Պէյլերեան

պահեստիներ՝ Խաչիկ Ճանէլ, Անի Գարատայը, Սայաթ Չընար, Ռաֆֆի Եազմաճը:



Ահա կը հրատարակենք տարեգիրքիս 15-րդ թիւը...

Հակառակ դպրոցի մը պայմաններով սիրողական հրատարակչութիւն ընելու դժուարութեանց, մի քանի անձերու զոհողութեան շնորհիւ կը շարունակենք մեր համեստ տարեգիրքը պատրաստելու... որպէսզի մտայուն դառնան մեր աշակերտներու, ուսուցիչներու եւ անձնակազմին ամբողջ տարւոյ մը գործունէութիւնը...

Ուսումնական մարզէ ներս մեր ընթացիկ աշխատանքին զուգահեռ, այս տարի եւս շարունակեցինք համալսարանի մտից քննութեանց դասընթացքը, ըստ ընդհանուր փափաքին՝ աշակերտ եւ ծնողներու...

Այո՛, դպրոցը կը շարունակէ դասարանային, գիտական լուրջ աշխատանքին, ինչպէս միշտ... բայց նկատի ունենալով անհատին ինքնութեան զարգացումը, զարկ կու տանք նաեւ արտադասարանային աշխատութեանց...

Ուրեմս, 2017-ին մեր ամենայիշատակելի ձեռնարկը եղաւ *Հայ Դպրոցը Անցեալէն Դէպի Այսօր* հանդիսութիւնը. որը ձօնեցինք Կեղոնականի 130-ամեակին: Հայերէնի ուսուցիչներով տարուած աշխատանքին իրենց աջակցութիւնը բերին նաեւ մշակութասէր, խորհրդատու անձեր...

Բացի վարժարանիս երդիքէն, տարբեր սրահներու մէջ երեք անգամսեր ներկայացուած հանդիսութիւնը դիտեցին Պոլսահայ համայնքէն շուրջ 1500 հոգիներ: Երկարատեւ պատրաստական աշխատանքի արդիւնք էր սոյն ձեռնարկը, որուն թէ՛ աշակերտութեան եւ թէ՛ ուսուցչաց կազմին մօտ առթած զարգացումը կ'արժէր բոլոր զոհողութեանց... Այս առթիւ հրատարակեցինք նաեւ բովանդակալից, պատկերազարդ գիրք մը, մեծ մասամբ մեր գաւառի երբեմնի դպրոցներուն յատկացուած...

Որպէսզի մեր անցեալէն հեռանալով բոլորովին չմահանայինք եւ կամ միմիայն անցեալին մէջ ապրելով հաշմանդամ չըլլայինք... ինչպէս կը պատգամէր մօտ 150 տարիներ առաջ Չմիւռնիացի մտաւորական-ուսուցիչ եւ հրատարակիչ Մատթէոս Մամուրեան:

Սիլվա Գոյումճեան
Տնօրէն՝ Ազգ. Կեղոնական Վարժարանի

ԲԱԺԱՆՄԱՆ ՍԵՄԻՆ ԺԲ. ԴԱՍԱՐԱՆ...

Սերտար Պորա- Կեդրոնականի կեանքս երազի մը պես շուտ վերջացաւ: Չորս տարուայ ընթացքին հանդէսներու ընկերային ձեռնարկներու մասնակցեցանք, գրեթէ ամէն շաբաթ դասախօս մը այցելեց մեր դպրոցը, Նոր բաներ սորվեցանք, երբեմն նեղուեցանք: Բայց անմոռանալի յիշատակներ ունեցանք: Կը մաղթեմ որ դպրոցս շարունակեցնէ իր առաքելութիւնը ու ապրի դարձ դար:

Միրանտա Գէլեաբան- Կեդրոնականի մէջ գիտական տեսակետէ գարգացայ բայց Նոյնաժամանակ սորվեցայ որ առանց մշակոյթի՝ գարգացումը իմաստ մը չունի: Իրաւունքներս պաշտպանելը, մարդոց ապրած դժուարութիւններուն ձայն տալը եւ պատմական իրականութիւնները հոս սորվեցայ:

Թինա Փոլատ- Իմ եղբայրս ալ Կեդրոնականի եւ եւ միշտ կը պատմէր դպրոցը ինծի: Հիմա երազս իրականացաւ ու ես ալ անոր պէս Կեդրոնականի մը եղայ: Վստահ եմ որ շատ պիտի կարօտնամ:

Նարոտ Դալար Ակօշեան- Մարդկային արժեքներու, կանանց իրաւունքներու եւ ընկերային ձեռնարկներու կարեւորութիւնը հոս սորվեցայ: Շնորհակալութիւն բոլոր ուսուցիչներու:

Նորա Գասար- Կեանքիս ամենէն հաճելի բայց դժուար 4 տարին Կեդրոնականի մէջ անցուցի: Երբ առաջին անգամ դպրոցը այցելած էի, լաբիրինթոսի նմանցուցած էի զայն: Որովհետեւ ուներ շատ դասարաններ, մեծ սանդուխներ, ուսուցիչներու սենեակներ: Ուսուցիչները մեր ընտանիքը եղան, միշտ մեր քուփս էին:

Շանթ Հեգիմօղլու- Կեդրոնականէն շատ բան սորվեցայ, բայց Նախ եւ առաջ մարդ ըլլալը: Շնորհակալութիւն:

Լաւինիա Ինկիլիզօղլու- Սկիզբը դիւրին չկրցայ վարժուիլ դպրոցին: Բայց ուսուցիչները այնքան հետաքրքրուեցան որ իմ ինքնավստահութիւնս մէջտեղ հանեցին կրնամ ըսել: Հայու ինքնութիւնը, մայրենիին կարեւորութիւնը, պատմութիւնը այս դպրոցին մէջ սորվեցայ: Կազմակերպուած ձեռնարկներով մեր աւանդութիւնները եւ պատմութիւնը տարածելու ջանացինք: Կեդրոնականի մը ըլլալով ես ալ կ' ուզեմ այս առաքելութիւնները շարունակեցնել:

Միքայէլ Նիկողոսեան- Երբեմն զուարճացանք, երբեմն յուզուեցանք, երբեմն նեղուեցանք բայց այս 4 տարին ինչպէս անցաւ չհասկցանք: Կեանքին պատրաստուեցանք հոս ու հիմա ամուր քայլերով կը բաժնուինք մեր վարժարանէն:

Սարին Լօրտ- Ինչպէս պիտի վարժուիմ նոր ընկերներուն, նոր ուսուցիչներուն, նոր դպրոցին... 4 տարի առաջ էր այս մտահոգութիւններով եկած էի ու հիմա նոր հարցում մը միտքս՝ «Ինչպէս պիտի բաժնուիմ անոնցմէ»: Կեդրոնականէն ստացածներս վստահ եմ որ զիս լաւ տեղեր պիտի տանի:

Հերա Տիգմէ- Ուրախ եմ Կեդրոնականի օղակներու շրջաններուն մաս կազմեցի: Լաւ որ Նախակրթարանէն յետոյ հոս եկած եմ: Պիտի չմոռնամ Կեդրոնականի օրերս:

Ռոյ Բօլաթ- Ուսուցիչները մեզի հետ շատ հետաքրքրուեցան, ընկերային տեսակետէ շատ զարգացայ հոս: Հիմա շրջանաւարտ կ'ըլլամ ու վստահ եմ որ շատ պիտի կարօտնամ դպրոցս:

Գառլա Գոփարան- Առաջին տարիս քիչ մը դժուար անցած էր բայց յետոյ ընկերներուս ալ ազդեցութեամբ շատ լաւ օրեր անցուցի: Խօսելակերպս, վարմունքներս, գիտելիքներս զարգացաւ այսինքն մեծցայ այս երդիկին տակ:

Արես Չեբէմ- Ուսուցիչները շատ սիրելով դասեր պատմեցին եւ մեզի հետ ընկեր եղան: Յուսամ մեր կապերը միշտ ամուր կը մնան: Եթէ ապագային զաւակ ունենամ կ'ուզեմ որ ան ալ Կեդրոնականի ըլլայ:

Արտա Սեվիլ- Երբ առաջին անգամ Կեդրոնականի դռնէն ներս մտայ շատ մտահոգ էի: Բայց օրերը անցան եւ տեսայ որ պարապի էր մտահոգութիւնս: Լաւ ուսում ստացայ հոս եւ ինքզինքս զարգացուցի:

Արտեր Եօզէլիք- Չորս տարուայ ընթացքին լաւ ընկերութիւններ կազմեցի, հակառակ որ պարտեզ չունէինք նորէն ալ շատ զուարճացանք:

Տիգրիս Գօյունճու- Անմոռանալի յիշատակներ եւ ուսուցիչներ ունեցայ: Շրջանաւարտ ըլլալու ուրախութիւնը ունիմ բայց Նոյնաժամանակ դպրոցէս բաժնուելու տխրութիւնը: 9րդ դասարան... Նոր ուսուցիչներ, նոր ընկերներ, նոր դպրոց... Հիմա բոլորը շատ հեռու կու գան: Սրտանց կրնամ ըսել որ Նկարագիրս հոս զօրացաւ, նոր ընկերութիւններ կազմեցի: Ուրախ եմ որ ես ալ Կեդրոնականի մըն եմ:

Օլիվիա Ուլուաթ- Կեդրոնականը իմ երկրորդ ընտանիքս եղաւ: Ամէն տեսակետէ շատ զարգացած կը տեսնեմ ինքզինքս:

Լիանա Չաքըր- Թերեւս կատարեալ աշակերտ մը չկրցայ ըլլալ բայց հոս նոր ընտանիք մը շահեցայ ու կեանքին պատրաստուեցայ: Կեդրոնական վարժարանի անդամը ըլլալէն շատ ուրախ եմ:

Արտա Ապա- Կեդրոնականը ինծի շատ բան անւեցուց: Շնորհակալութիւն բոլոր ուսուցիչներու:

Լենա Ճանեան- Հոս մեծցայ, հասունցայ ու ինքզինքս արտայայտելու դիւրութիւնը ունեցայ: Շնորհակալութիւն:

Ալէքս Եօղուրթճու- Ես դժբախտաբար դպրոց սիրող մէկը չեմ: Բայց կան բաներ որոնք Կեդրոնականէն զատ ուրիշ ոչ մէկ դպրոց կրնար շահեցնել ինծի: Շատ լաւ ընկերներ ու ուսուցիչներ ունեցայ, ինքնավստահութիւն շահեցայ ու գաղափարներս կրնամ արտայայտել:



Մրցանակակիր շրջանաւարտներ...


Սրտի Խօսք՝ շրջանաւարտներէն...

Երբ Տասնեանի Ցրդ դասարանի աշակերտ էի, այցելեցինք մեր հինգ լիսեները իրենց ծանօթացման օրերուն: Ահա կարգը եկած էր Կեդրոնականին: Դասերու ծանօթացումէն ու դպրոցը շրջելէ ետք, հաւաքուեցանք այն պատմական սրահը որուն պատերը շրջապատուած էին հին ու նոր շրջանաւարտներու նկարներով. կարծես իւրաքանչիւրը իր պատմութիւնը կը պատմեր լուռ ու մունջ: Անկարելի էր Տիկին Սիլվային ըսածներէն չազդուիլ որ կը յիշեցներ մեզ մեր այսօրուան իրականութիւնները ու հետզհետէ նուազող հայ դպրոցներու աշակերտութեան թիւը: Կը նշէր հայու զակին հայկական դպրոց յաճախելու անհրաժեշտութիւնը: Հակառակ ատոր համարձակութեամբ խօսք առի ու ըսի գերազանց դպրոցներու գոյութիւնը բաղդատմամբ մեր հինգ լիսեներու ու համրեցի ինքնավստահութեամբ անոնց անունները քանի վստահ էի որ պիտի յաջողէի անոնց մտից քննութեան:

Վերամուտ էր ու ես դարձած էի Ազգային Կեդրոնական Վարժարանի աշակերտ: Լաւ որ չէի կրցած յաջողիլ լիսեներու մտից քննութեան: Քանի այս մթնոլորտը շէջեցի նոյնքան լեցուեցայ այն գիտակցութեամբ որուն անունն էր «ինքնութիւն»: Օրէ օր կ'անդրադառնայի թէ ինչպէս կը պաշտպանէի մտածումներս, յարգելով օտար գաղափարները ու գիտակից կը դառնայի ընկերային հարցերուն: Այս երդիկին տակ որոշեցի իմ ապագայ ասպարէզս: Երաժիշտ պիտի ըլլայի...

Կեանքը կը բաղկանայ հաւանականութիւններէ, զորս միմիայն կրնանք յուսալ: Իսկ այսօր, ես, իրականացուցի այս հաւանականութիւններէն մին: Ուսուցիչներս, ընկերներս, Կեդրոնականի անմոռանալի տարիներս... Իւրացուցի ձեր բոլորը եւ անկասկած կրնամ ըսել թէ իմ սիրելի Կեդրոնականը իր կնիքը դրաւ ինքնութեանս վրայ:

23 Յունիս, 2017



Մասիս Թաշը

Dört yıllık bir yolculuğun son günündeyiz ve ben fark ettim ki, aslında ismimin yazılı olduğu kimliğimden başka bir beni aramaya çıkmışım bu yola. Herkesin bir hikayesi, anlatacağı varmış ama en önemlisi kökü ortak bir geçmişte saklıymış. Biz okulumuzda bu geçmişin “getron”unda toplandık ve kendi hikayelerimizi yazmaya başladık.

Okul seçimimi sadece akademik başarı açısından yaptığımı sanıyordum, ta ki öğrendiğim tüm isimlere geçmişimin ayak izlerine, okulumun koridorlarında rastlayana denk. Onların yaşatmak istediklerinin aslında benim bu okulda tanıştığım ve kazandığım yeni kimliğim olduğunun bilincindeyim artık. Gelecekte yazılacak hikayedeki her bir kahramanın da bunun farkına varması bu izleri yaşatmamızla mümkün olacaktır.

Getronagan'da günümüzün hikayesini, bizler geçmişimizi unutmadan yazmaya çalıştık. Bunu öğretmenlerimiz olmadan başaramazdık. İleride Einstein'ın Rölativite teorisini unutacağız, integrali, artık çözemeyeceğiz, fotosentezin formülünü yazamayacağız ama emin olabilirsiniz ki bu lisede sizinle paylaştığımız hiçbir anı unutmayacağız. Biz kendi gençliğimizi yaşarken belki, öğretmenlerimizi üzdük, kızdık ve kızdırdık ama lise hayatını keyifli kılan da bunlar değil midir? Şimdi tek söyleyebileceğimiz saygı ve sevgiyle size kocaman bir teşekkür. Ne güzel ki varız, ne mucize ki varsınız!

İçinde sizlerin de bulunduğu geleneksel yıl sonu fotoğraflarına bir yenisini de biz ekledik. Her geçen gün artan eksilme kaygımızı arkamızda bıraktığımız göstergesidir bu. Bitmesinden korktuğumuz bu döngüye bir fotoğraf daha ekleyerek geleceğe bir adım daha atıyoruz. Hepimiz burada kazandığımız değerlerin ve farkındalığın korunmasını ve bunun topluma yansımalarının en iyi şekilde olmasını birlikte sağlayacağız.

Arkadaşlar sizlere sesleniyorum! Yeni hayatımızda kaybolma hissini yaşadığımız o an, izleri takip edip bir araya gelelim olur mu? Çünkü bu çatı altında beraber olmak inanılmaz bir duygu. Toplumumuzun bir sembolü haline gelen okulumuzdan “Getronaganlı” olarak mezun olmaktan gurur duyuyoruz. Hayatın formülünü okulda bulduk, gerisi matematik!

23 Haziran, 2017



Lavinia İngilizoğlu



Դրուագներ՝ շրջանաւարտից հանդիսութենէ (Որդւոց Որոտման Եկեղեցի - Մերոպ Մուրաֆեան Մշակոյթի Կեդրոն, 23.6.2017)

ԲԱԺԱՆՄԱՆ ՍԵՄԻՆ ԺԲ. ԴԱՍԱՐԱՆ...

Սելին Ալթունկարա- Հոս է որ առաջին անգամ բեմին վրայ երգեցի ու թատրոն խաղացի, ինքնութենես ու մայրենիես չիեռացայ: Հոս ստացած զարգացումիս ես ալ չեմ կրնար հաւատալ: Բաժնուիլ չեմ ուզեր որովհետես ընտանիքիս պես է այս վարժարանը: Լաւ որ Կեդրոնական եկած եմ, շատ պիտի կարօտնամ:

Նարեկ Պոյնուբալըն- Կարծեք թէ Կեդրոնականի մէջ ես ինքզինքս գտայ: Ընկերային եւ քաղաքական տեսակետէ շատ զարգացայ: Երաժշտութեան ակումբին հետ տուած համերգները եւ դեր ունեցած թատրոններս անմոռանալի են ինձի համար: Հպարտ եւ ուրախ եմ Կեդրոնականի մը ըլլալէն:

Լեթիսիա Մաթոսովու- Նոր դպրոցի մը սկսելու վախը ես ալ ունեցայ բայց Կեդրոնականի մտերմիկ մթնոլորտին շնորհիւ շուտ մը վարժուեցայ: Լաւ որ Կեդրոնականի մը եղայ:

Սիրեմ Արթուլ- Երբ փոքր էի մայր լեզուի կարեւորութիւնը չէի հասկնար: Բայց Կեդրոնական գալէն յետոյ սար կարեւորութիւնը զգացի, մշակոյթես չիեռացայ ու ինքնութեանս տեր եղայ:

Սարգիս Սեմերճեան- Շատ լաւ ընկերութիւններ կազմեցի Կեդրոնականի մէջ: Շնորհակալութիւն բոլոր տրուածներուն համար:

MEZUNLARA ÖDÜLLER...

Selin ALTUNKARA
SARAYLI Özel Altın Madalya
(Fen ve Matematik Alanında)

Selin ALTUNKARA -Birinci- Tam Altın
Nora KASAR -İkinci- Yarım Altın
Miranda KEÇEYAPAN -Üçüncü- Çeyrek Altın

Özel Ödül
Arat YILDIRIM -Ermenice
Masis TAŞI -Müzik



GETRONAGAN'DA GELENEKSEL YENİ YIL...

2015-2016 Gağant programımızı her yıl olduğu gibi bu yıl da 12. sınıflarımız düzenledi. Program, geçen yılın önemli olaylarını içeren bir power point sunumuyla başladı. Ardından, Lady Gaga'nın bir şarkısının yarı İngilizce yarı Ermenice bir klibini öğrencilerimiz danslarıyla taklit ettiler. Sonra bir evlilik programı skeci yapıldı. Program öğrencilerimizin, öğretmen ve personel taklitleriyle çok neşeli bir hal aldı. 80'li yıllar korusu ve iki Ermenice şarkının ardından Gağant Baba'yı karşıladık. Geleneksel okul çekişimiz ve müdürümüzün Gağant konuşmasıyla programımız sonlandı.



Կեդրոնականի վերջին տասնամեակներուն գրեթե անաղականացած մշակութային ձեռնարկներու շարքին այս տարուան օղակն է «Հայ դպրոցը»:

Դպրոցը որպէս դաստիարակութեան եւ գիտելիքներու փոխանցման հաստատութիւն ի բնէ սերտօրէն կապուած է մարդկութեան յառաջընթացին եւ պարտաւորուած՝ քայլ պահել ժամանակին հետ: Կեանք եւ մաքառում... Հայ ժողովուրդն ալ իր գոյապայքարին զուգահեռ ստեղծած է դպրոցներ եւ յատկապէս ըմբռնելով ժամանակի ոգին, 19րդ դարուն զարկ տուած է դպրոցի գաղափարին:

20րդ դարու սկիզբը Օսմանեան Կայսրութեան տարածքին՝ շուրջ երկու հազար վարժարաններէն այսօր Պոլսոյ մէջ ամփոփուած տասնվեց դպրոցներով մենք հայերս կը մաքառինք յամառօրէն նոր սերունդներ պատրաստել համաշխարհայնացման ծայր աստիճան մրցունակ պայմաններուն մէջ:

Այս հողերուն վրայ մշակոյթ ստեղծող, խօսք եւ կշիռք ունեցող ժողովուրդ մը այսօր փոքր «պոլսահայ համայնք»ի մը վերածուած՝ գնահատելի ջանադրութեամբ ոտքի կը պահէ իր դարաւոր հաստատութիւնները, օր ըստ օրէ սպառնելով եւ կորսնցելով նաեւ իր ժառանգը:

Անցեալը վերոյիշել եւ վերմբռնել անոր կարելորութիւնը... Զայլ մը՝ գիտակցելու ներկային եւ ուղղուելու դէպի ապագայ... Ապագայ մը որ կը կարօտի կազմակերպեալ աշխատանքի... Ահա ելակետը «Հայ Դպրոցը՝ Անցեալէն Դէպի Այսօր» ծրագրին, որուն ձեռնարկած ենք որպէս հայերէնի ուսուցիչներ, որպէս Ազգային Կեդրոնական Վարժարան... Վարժարան, որ իբրեւ արդիւնք Չարթօսքի, 130 տարիներ առաջ հիմնուած էր՝ ուսուցիչ եւ մտաւորական պատրաստելու նպատակով, Ներսէս Վարժապետեան Պատրիարքի եւ շրջանի մտաւորականներու ու բարերարներու միասնական ջանքերով...:

«Հայ Դպրոցը՝ Անցեալէն Դէպի Այսօր» համեստ ծրագրով ջանացինք յատկապէս թղթատել մեր անհետացած գաւառի կրթական կեանքէն քանի մը էջեր միմիայն, սոյն գրքոյկը քիչ մը եւս ընդլայնած բովանդակութեամբ կը նպատակադրէ յիշատակելի դարձնել համանուն հանդիսութիւնը, առանց յաւակնելու Հայ Դպրոցը իր ամբողջական գիծերով ներկայացուցած ըլլալու:

17 Ապրիլ 2017

(Տնօրէնութեան խօսքը «Հայ Դպրոցը» գիրքին սկիզբը)

ՀԱՅ ԴՊՐՈՅԸ

ԱՆՑԵԱԼԷՆ ԴԷՊԻ ԱՅՍՕՐ



Ժողովուրդ մը որ անցեալին կարող էր իրեն մարտնչել ժողովուրդներու մէջ պահել՝ հայկական ընկերակցութիւնը:

Զեռնած՝ Ազգ. Կեդրոնական Վարժարանի 130-ամեակին



Եւ պարտնէր կը անցնէր անցիկը: Եւ նախապէս իրեն հարկաւոր էր զանազան շրջաններէն ժողովուրդներու մէջ պահել՝ հայկական ընկերակցութիւնը:



13 Մայիս 2017 Երասք ժամը՝ 18:00
Գէլերթ Թատրոն - Հարսիլէ



ԱՖԻՇԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

«Ես դպրոցներէն կը սպասեմ ազգին փրկութիւնը»:

Ներսէս Պատրիարք Վարժապետեան (Հիմնադիր՝ Կեդրոնական Վարժարանի)

«Ժողովուրդ մը իր անցեալէն գատելը լիովին մահացնել է, միմիայն անցեալին մէջ պահելը՝ հաշմանդամ ընել»:


Մատթէոս Սամուրեան (Մանկավարժ գրող, հրապարակագիր)

Հանդիսութեան առթիւ պատրաստուած գրքոյկին կողքը

Նկարներ
Սանասարեանցիներ՝ բոլորուած Մկրտիչ Սանասարեանի նկարին շուրջ Կարնոյ Աղջկանց Վարժարանը / Կիրաստի Ուսումնական Խորհուրդը / Եփրատ Գոլէճի Նուագախումբը



Կիլիկիա երգը...



Ո՛վ մեծաւքանչը կը հնչէ «Հայ Դպրոցը» հանդիսութեան ավարտին (Քենթեր Թատրոն, 13 Մայիս 2017)



Դրուագներ
ՀԱՅ ԴՊՐՈՑԸ
հանդիսություն...



ՀՀ Մանկավարժականի խօսքը՝
Քնարիկ Աբրահամյան

«ՀԱՅ ԴՊՐՈՑԸ» ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

ԲԱՅՄԱՆ ԽՕՍԵՔ՝ Սիլվա Գույումճեան - Տնօրեն Ազգ. Կերտնակաճան Կարժարանի
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ՝ Հեթանոսական շրջան, Վանքեր, Վերածնունդ, Մխիթարեաններ, Չարթոսք, Կարին, Սեբաստիա, Ատանա, Մեզիրե, Եփրատ, Վան, Չմիւռնիա, Ռոտտոթո, Ատրիանապոլիս, Պերպերեան, Հիւնդեան, Ընկերային Միութիւններ, Մելգոնեան. **Համակարգչային Պատրաստութիւն՝** Լիզեթ Պայրամ Էրեն. **Ընթերցում՝** Նարոտ Էրթոլ, Մասիս Թաշը. **Երաժշտութիւն՝** «My Dark Place», «Գիշեր Պար», «Even If You Leave» (Արա Տիւնքեան եւ The Secret Trio), «Չէյթունի Ծառ» (Արթո թունչայօյաճեան)
ՂԱՍԱՐԱՆ՝ Ուսուցիչ՝ Արեգ Պերճ Կեօթտաղ. **Աշակերտ՝** Արսէն Եօզգալայ, Սալբի Մօր. Մելանի Ագայ, Ռաֆֆի Աշըը, Ալարա Թարաքըըըըըը, Մելանի Գօսնա, Սարվէն Մուրատ Չընար, Վարդան Մամիկոնեան
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ՝ «Հայու Հոգին» (Համաստեղ). **Արտասանութիւն՝** Արեգ Պերճ Կեօթտաղ, Սարվէն Մուրատ Չընար.
ՊԱՐ՝ «Թամգարա», «Ծաղկաճորի»
ԵՐԳ՝ «Կիլիկիա» Մելանի Ագայ. **Կիթառ՝** Արեգ Պերճ Կեօթտաղ

ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ՝ Խաչատուր Աբովեան - Ռաֆֆի Աշըը Յովսէփ Իզմիրեանց - Մելանի Ագայ Մատթէոս Մամուրեան - Վարդան Մամիկոնեան Գրիգոր Չօիրապ - Ալարա Թարաքըըըըըը Չարուհի Արշակունի - Մելանի Գօսնա
ՏԵՍԱԵՐԻՉ-ՀԱՐՑԱԶՐՈՅՆՆԵՐ՝ ԺԱ. ԵՆ. ԺԲ. *Կարգի աշակերտներուն երեց սերունդի հետ կատարած հարցազրոյցներէն հատուածներ*
 Բէթա Պալըըըըըը (Առէն Մանուկ Կիլիկիտերէ) Աննա Սամուրեաշօղլու (Քնար Կեօջըր) Մարգրիտ Թաշքըըըը (Ռոնի Չիլալըըը) Վիթթօրիա Մաքսուլէ Աքսոյ (Ճէսիքա Աքսոյ) Մարգրիտ Քոչաքեան (Ալին Կիլիկաշ) Հիլտա Գույումճուօղլու (Լիանա Գույումճուօղլու) Էլմաս Չանաքըը (Արարատ Արաքօղլու) Համլօ Թաշ (Երազ Արսլան) Հաթուն Մառի Թունչ (Հերա Տիգալէ)
ԹԵՄԻՔ ամփոփում՝ Դալար Թթուրեան '14
ԹԱՏՐՈՆ՝ «Շորթիչ Գուլէն» [Ձիւնականի (Գեորգ Աբելեան) «Հայկական Դպրոցի Տեսչարանին Մէջ» գործէն պատշաճեցուած]. **Բեմադրութիւն՝** Արեւ Կարեան. **Օգնական բեմադրիչ՝** Սարգիս Հեմէնկիլ. **Տնօրեն՝** Տայք Արեւ Միսիսօղլու



Ժիլպեր՝ Սեւան Եօզիմշէք. **Լինտա՝** Մարալ Աթընըզ. **Ծնողք՝** Ռուստի Կիրէկեօզօղլու. **Աշակերտու՝** Կասիա Բօջ. **Զարտուղար՝** Սելինա Մարգրիտ Չէքէմ. **Վարդուհի՝** Տարչա Տաղ

ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ՝ Մասիս Թաշը, Նարօտ Դալար Ակոշեան, Նարեկ Պօյնուգալըն. *(Ինքնաբուլի երգեցողություն՝ արծանազրուած Սիվրիհիսարի Ս. Երրորդություն եկեղեցւոյ մէջ՝ աւարտական դասարանի այցելութեան ընթացքին)*

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ՝ Արդիական պար («Քէֆ քէֆ») Արթօ Թունչայօյանեան), Տողանցք վարժարաններու, «Ո՛վ Մեծասքանչ»

ԵՐԳՉԱՆՈՒՄԲ՝ Մասիս Թաշը, Նարօտ Դալար Ակոշեան, Նարեկ Պօյնուգալըն, Սելին Ալթունգարա, Սիրեմ Արթուլ, Սելանի Ագայ, Լարիսսա Փոյրազ, Անտրէ Տուրսուն, Լիզա Օլկար, Անի Գենան, Լենա Նալպանդազարօղլու, Լուսի Թէք, Սելին Տօնուբօք, Լուսին Եանար. **Վարիչ՝** Յակոբ Մամիկոնեան երաժշտութեան ուսուցիչ

ՊԱՐԱՆՈՒՄԲ՝ Սարին Իչ, Նայրա Սարայտար, Թալիա Եօլունսէվեր, Լարիսսա Թաշքըրան, Ռուստի Կիրէկեօզօղլու, Ժաիտ Լոյս Կեզեր, Լարա Սուլուօղլու, Լէթիսիա Սերգիզեան, Զարլա Տեմիրճի, Թալիա

Թէքլիւրէք, Նաթան Սիւլլինօղլու, Ռուստի Էքսեր, Սելինէ Թեմէլճի, Թալիա Գարաճեան, Պուրակ Թանըշման, Սելինա Մարգրիտ Չէքէմ, Նատին Միտոյեան, Սարին Պայժառ Արսլան, Լարա Չալըքեան, Թալիա Շաշմազ, Նիրվա Գուլումճու. **Պարուսոյց՝** Պանու Աչըքսէնիզ. **Խորհրդատու՝** Յակոբ Արի Կիւլէչ

ԹԵՆԵԻՔ ՍԱՐԸ՝ Ալէն Թաշճըղլու

ՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ՝ Աշակերտներ՝ Զրիս Հավլունճիեան, Այգ Արամ Պալըն, Էլիզա Գարաբընար, Զարլա Թիւզիւթիւրք, Թիլա Թիւզիւթիւրք, Լուսին Զուրթուլագայա, Լարիսսա Ըլկարլար, Ամէն Մանուկ Կիւլլիստերէ, Արարատ Արաբօղլու, Թալիա Արաբօղլու, Թալիա Աշըն, Այգուն Ճան Գօճապայ, Պայթար Էրթօլ

ԳԻՐԵԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ՝ Արարատ Շէքերեան

ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՖԻՇ՝ Գրիգոր Սահակօղլու

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ՝ Արտաշէս Մարկոսեան, Չաքարիա Սիլտանօղլու, Վահագն Բէշիշեան

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ՝ Տնօրէնութիւն եւ Հայերէնի Ուսուցիչներ Կեդրոնական Վարժարանի. Սիլվա Գուլումճեան, Նաթալի Պաղտատ Թուրաչ, Տիանա Պուլտուք Եանարտաղ, Լիզա Պայրամ Էրէն, Արարատ Շէքերեան, Արաս Սարըչօպան

1. Aer Savulyan	İstanbul Bilgi Üniversitesi	Reklamcılık (%50 Burslu-İngilizce)
2. Aleks Yoğurtçu	Kadir Has Üniversitesi	Bilgisayar Mühendisliği (%50 Burslu-İngilizce)
3. Ani Nalyan	İstanbul Bilgi Üniversitesi	Medya ve İletişim Sistemleri (%50 Burslu-İngilizce)
4. Arad Yıldırım	Yıldız Teknik Üniversitesi	Rehberlik ve Psikolojik Danışmanlık
5. Arda Aba	Boğaziçi Üniversitesi	Bilgisayar ve Öğretim Tek. Öğretmenliği (İngilizce)
6. Arda Sevil	Boğaziçi Üniversitesi	Fizik Öğretmenliği (İngilizce)
7. Arder Özçelik	İstanbul Bilgi Üniversitesi	İnşaat Mühendisliği (%50 Burslu-İngilizce)
8. Ares Çekem	Yakın Doğu Üniversitesi	Tıp (İngilizce)
9. Dikris Koyuncu	İstanbul Bilgi Üniversitesi	Endüstri Ürünleri Tasarımı (%50 Burslu-İngilizce)
10. Gan Bağ	İstanbul Bilgi Üniversitesi	Pazarlama (%50 Burslu-İngilizce)
11. Garen Dolar	Kadir Has Üniversitesi	Reklamcılık (%25 Burslu-İngilizce)
12. Hera Dikme	İstanbul Bilgi Üniversitesi	Endüstri Mühendisliği (%50 Burslu-İngilizce)
13. Janin Terzioğlu	Beykent Üniversitesi	Gastronomi ve Mutfak Sanatları (Tam Burslu)
14. Karla Koparan	Boğaziçi Üniversitesi	Kimya Öğretmenliği (İngilizce)
15. Katya Acar	İstanbul Üniversitesi	Turizm İşletmeciliği
16. Kristin Kayaoğlu	Baheşehir Üniversitesi	Okul Öncesi Öğretmenliği (%50 Burslu-İngilizce)
17. Lara Demirci	Kadir Has Üniversitesi	Psikoloji (İngilizce)
18. Lara Keşişoğlu	İstanbul Bilgi Üniversitesi	Sosyoloji (%50 Burslu-İngilizce)
19. Lavinia İngilizoğlu	Bükreş Politeknik Üni.	Medikal Mühendisliği
20. Lena Canyon	İstanbul Bilgi Üniversitesi	Endüstri Ürünleri Tasarımı (%50 Burslu-İngilizce)
21. Liana Çakır	İstanbul Bilgi Üniversitesi	Ergoterapi (%50 Burslu)
22. Lori Santikyan	İstanbul Bilgi Üniversitesi	Medya ve İletişim Sistemleri (%50 Burslu-İngilizce)
23. Masis Taşı	Mimar Sinan Üniversitesi	Kompozisyon
24. Meri Uğurgel	İstanbul Bilgi Üniversitesi	Medya ve İletişim Sistemleri (%25 Burslu-İngilizce)
25. Michael Nigoğosyan	Marmara Üniversitesi	Seramik
26. Miranda Keçeyapan	Mef Üniversitesi	Makine Mühendisliği (%75 Burslu-İngilizce)
27. Nairi Darın	İstanbul Bilgi Üniversitesi	Uluslararası Tic. ve İşletmecilik (%50 Burslu-İngilizce)
28. Narod Ayoşyan	İstanbul Bilgi Üniversitesi	Mekatronik Mühendisliği (%50 Burslu-İngilizce)
29. Nikol Ak	Baheşehir Üniversitesi	Okul Öncesi Öğretmenliği (%50 Burslu-İngilizce)
30. Nora Kasar	İstanbul Teknik Üni.	Biyomühendislik (UOLP-MONTANA) (İngilizce)
31. Olivya Uluak	İstanbul Bilgi Üniversitesi	Fizyoterapi (%50 Burslu)
32. Roy Polat	İstanbul Bilgi Üniversitesi	Bilgisayar Mühendisliği (%50 Burslu-İngilizce)
33. Sarin Lort	Mimar Sinan Üniversitesi	İstatistik
34. Sarin Şahinoğullarından	İstanbul Bilgi Üniversitesi	Sosyoloji (%50 Burslu-İngilizce)
35. Sarkis Semerciyan	Baheşehir Üniversitesi	Yazılım Mühendisliği (İngilizce)
36. Selin Altunkara	Boğaziçi Üniversitesi	Fizik Öğretmenliği (İngilizce)
37. Serda Birgül	İstanbul Kültür Üniversitesi	İ Mimarlık ve Çevre Tasarımı (%25 Burslu)
38. Serdar Bora	Boğaziçi Üniversitesi	Kimya Öğretmenliği (İngilizce)
39. Sesil Demir	İstanbul Üniversitesi	Tarih Öncesi Arkeolojisi
40. Sevag Erbal	İstanbul Bilgi Üniversitesi	İşletme (%25 Burslu-İngilizce)
41. Sirem Artuç	İstanbul Bilgi Üniversitesi	Genetik ve Biyomühendislik (Tam Burslu-İngilizce)
42. Şant Hekimoğlu	Baheşehir Üniversitesi	Mekatronik Mühendisliği (%50 Burslu-İngilizce)
43. Şirag Tahmisciyan	Yıldız Teknik Üniversitesi	İstatistik
44. Tayis Arslan	Ko Üniversitesi	Uluslararası İlişkiler (%25 Burslu-İngilizce)
45. Tina Polat	Yıldız Teknik Üniversitesi	Kimya (İngilizce)
46. Yeraz Arslan	Sabancı Üniversitesi	Sanat ve Sosyal Bilimler Prog. (%25 Burslu-İngilizce)

2017 YGS-LYS BAŞARI GRAFİĞİMİZ


2017 Türkiye Geneli Üniversiteye Giriş Başarı Yüzdeleri**

Tüm liseler	% 36
Fen Liseleri	% 56
Anadolu Liseleri	% 46
Sınavla öğrenci alan özel liseler	% 49
Sınavsız öğrenci alan özel liseler *	% 33

* Bu gruba dahil olan **GETRONAGAN** % 96

** Açıköğretim fakülteleri dikkate alınmamıştır.

(2017 Okul türlerinin puan ortalamalarına göre)



2016 ÜNİVERSİTE GİRİŞ SINAVLARINDA GETRONAGAN

- | | | |
|--|-----------------|-------------|
| ■ LYS TM'de türümüzdeki 14 lise arasında | Türkiye | 1.si |
| ■ LYS TM'de türümüzdeki 8 lise arasında | İstanbul | 1.si |
| ■ LYS DİL'de türümüzdeki 8 lise arasında | Türkiye | 1.si |
| ■ LYS DİL'de türümüzdeki 3 lise arasında | İstanbul | 1.si |
| ■ LYS TS'de türümüzdeki 14 lise arasında | Türkiye | 2.si |
| ■ LYS TS'de türümüzdeki 8 lise arasında | İstanbul | 2.si |
| ■ LYS MF'de türümüzdeki 14 lise arasında | Türkiye | 4.sü |
| ■ LYS MF'de türümüzdeki 8 lise arasında | İstanbul | 2.si |

- Yüksek Öğretime Geçiş Sınavı'nda (YGS) ve Lisans Yerleştirme Sınavı'nda (LYS) öğrencilerimizin %100'ü puan barajını açık farkla aşmışlar,
- İki öğrencimiz bu yıl tercih haklarını kullanmak isteyip bir bölüme yerleşmemişlerdir.

Not: 2017 YGS-LYS ayrıntılı sonuçları Şubat 2018'de yayınlanacak olup, grafikler 2017 LYS Sayısal Bilgiler Kılavuzu'ndaki veriler doğrultusunda hazırlanmıştır.

Kaynak: YGS (Yükseköğretime Geçiş Sınavı) ve LYS (Lisans Yerleştirme Sınavı) sonuçları, www.osym.gov.tr.

ՄԵՆՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ ԺԱ. ԴԱՍԱՐԱՆ

Ժպտուն Կալիպոլու- Երբ որ Կեդրոնականի երեք տարիներս մտածեմ, կը նշմարեմ թե որքան հասունցած եմ ու կազմուած է իմ նկարագիրս օրէ օր: Առաջին անգամ բեմ բարձրացայ ու երգեցի շնորհիւ այս մտերմիկ մթնոլորտին: Լաւ որ Կեդրոնական ընտանիքի անդամը եղած եմ:

Արտէն Պողոսեան- Երբ միջնակարգը աւարտեցի, Կեդրոնական գալու մասին վախ մը ունեցայ, բայց հիմա շատ գոհ եմ: Հոս ուսուցիչներու եւ աշակերտներու միջեւ այնպիսի կապ մը հաստատուած է որ երբեք չքաշուեցայ նեղութիւններս բաժնելէ: Փիլիսոփայութիւնը, երաժշտութիւնն ու գծագրութիւնը իմ նախասիրած դասերս եղան: Կեդրոնականը ինձի նոր աշխարհայեացք մը տուաւ:

Մելանի Գոնճա- Կեդրոնականի մէջ երրորդ տարիս աւարտեցի: Կրնամ ըսել թե իւրաքանչիւր տարին իմ վրայ ունեցաւ տարբեր ազդեցութիւններ: Մանաւանդ մեր դասերու բովանդակութիւնն ու դասաւանդութեան ձեւերը զարգացուցին գաղափարներս: Ընկերային ձեռնարկներու մէջ պաշտօն ստանցած ըլլալով շատ հպարտ եմ: Կեդրոնականը ինձի համար եղաւ երկրորդ տուն մը իր տաքուկ մթնոլորտով:

Ռոնի Զըլպըրք- Կեդրոնականը կեանքիս մէջ նոր էջ մը բացաւ կարծեք: Առաջին ամիսներս դպրոցի մթնոլորտին, դասերուն, ուսուցիչներուն վարժուելով անցաւ, թեւ կարճ տեւեց այս շրջանը: Հետոյ տեսայ որ ես կը փոխուիմ մտայնութեան տեսակետէ: Դպրոցիս շատ բան կը պարտիմ:

Սարին Թաշիան- Տակաւին Յրդ դասարանի առաջին օրը կը յիշեմ: Ու այսօր վերջին օրս է հոս: Պիտի մեկնիմ Հայաստան իմ կրթական կեանքս շարունակելու: Ուրախ եմ որ Կեդրոնականի դռներն մտայ ու հպարտօրէն կ'ելլեմ այսօր: Պիտի կարօտնամ այս մտերմիկ միջավայրը: Շնորհակալութիւն բոլորին:

Լարիսա Ըլկարլար- Այս տարին նախկին տարիներու բաղդատմամբ աւելի լաւ անցաւ: Ազգային գիտակցութիւնը իմ մօտ Կեդրոնականի երդիկին տակ ստեղծուեցաւ: Ընկերային կեանքս ձեւաւորուելու սկսաւ: Գիտեմ թե յառաջիկային Կեդրոնականը կեանքիս ճիշտ կեդրոնը պիտի ըլլայ:

Քնար Կեօչեր- Նախ եւ առաջ հասունցայ, ինքնութեանս մասին գիտակից դարձայ: Կեանքիս մասին աւելի հաստատ որոշումներ առնելու սկսայ:

Ռաֆֆի Աշըր- Բնաւ չէի մտածեր թե դպրոց մը իր շէնքով, ուսուցիչներով, իր ուսման նպատակով այսինքն իր բոլոր անդամներով այսքան պիտի սիրեմ: Կը յուզուիմ որովհետեւ հետզհետեւ կը մօտենայ մեր շրջանաւարտութիւնը:

Ալարա Թարաքըղլու- Կեդրոնականի մէջ երրորդ տարիս վերջացաւ: Տարուոյն սկիզբը գիտեիք թե որքան դժուար ու ծանր պիտի անցներ այս տարին: Բայց այնքան ալ չդժուարացանք: Որովհետեւ դպրոցի մէջ յաւելեալ աշխատանքներով կրցայ պակասներս լրացնել: Այս տարուայ հանդեսէն, ձեռնարկներէն եւ պտոյտներէն շատ գոհ մնացի: Յուսամ գալ տարին այսքան շուտ չ'անցնի:

Լարա Տեմիր- Կեդրոնականի դռներն ներս չմտած շուրջս, աշխարհի մէջ ինչեր կը պատահին շատ ալ տեղեակ չէի: Հոս ստացայ նախ եւ առաջ ազգային ու համամարդկային գիտակցութիւն: Աւելի զգայուն դարձայ:

Արսէն Եօզգալայ- Այս հանդիսութիւնը շատ տպաւորիչ էր թե մեզի եւ թե համայնքին համար: Յուսամ ամենքս ալ լաւագոյն կերպով կը ներկայացնենք մեր դպրոցը ամբողջ մեր կեանքի ընթացքին:

Այգ Արամ Պալըր- Նախ եւ առաջ ես հոս ուրախ եմ: Մնայուն ընկերութիւններ շահեցայ: Ինքզինքս յառաջացուցի զանազան գործերու մէջ: Հասունցայ ու գիտակից դարձայ ինքնութեանս մասին:

Տայք Արես Միսիսօղլու- Երեք տարիները շատ արագ անցան: Դժուար էին բայց նոյնքան արդիւնաբեր: Այսօր կրկին կ'ըսեմ թե լաւ որ Կեդրոնական յաճախելու որոշում առեր եմ:

Տարօն Տավուլճու- Այս դպրոցին մէջ եղբայրներ, քոյրեր շահեցայ ես: Ինքզինքս ուսուցիչներու հանդէպ շատ մօտիկ կը զգամ: Անոնք միշտ մեր կողքին են, մեր խնդիրներով կը հետաքրքրուին, կը բաժնեն նաեւ մեր ուրախութիւնը:

Տերեւ Քոչ- ԺԱ. դասարանը մեր վրան մեծ բեր մը բեռնուց որովհետեւ գալ տարի համալսարանի քննութիւններուն պիտի մտնենք: Շատ աւելի աշխատեցայ բայց նոյն ժամանակ ուզեցի դպրոցիս բոլոր ձեռնարկներուն մասնակցիլ: Օրինակ Շիրինճէ Մաթեմաթիկի գիւղը զացինք: Իսկապէս շատ հաճելի անցաւ: Այս տեսակ պտոյտները մեր խորհածէն շատ աւելին կու տան մեզի: Ասիկա ապրելով սորվեցանք: Յոգնեցուցիչ տարի մը մեզ կը սպասէ կը, վախնամ...



ԺԱ դասարանը Պաղարպաշը Գերեզմանատան մէջ Մատթեոս Չարիֆեանի շիրմին շուրջ...

Մարալ Աթընըզ- Այս տարին ինձի համար ամենէն հաճելի տարին էր: «Հայ Դպրոցը» ձեռնարկին մէջ պաշտօն մը ստանձնած ըլլալը զիս շատ ուրախացուց: Մեր փորձերը, բեմադրութեան օրերը մեծ յուզում պատճառեց մեզի: Գալ տարի աւարտական դասարան ըլլալու յուզումը անշուշտ մեր մէջն է միշտ: «Կեդրոնականցի» մը ըլլալով շրջանաւարտ ըլլալ... Այս է մեր ամենամեծ պարծանքը:

Ճեսիքա Թ. Ազոյ- Իմ գնայլած արուեստագետներուն շրջանաւարտ եղած դպրոցին սանդուխներէն անցնիլ զիս կը հպարտացնէ:

Սեւան Եօզիմէք- Կեդրոնականցի ըլլալը մարդու շատ բան կը սորվեցնէ. նախ մեր ինքնութիւնը՝ յետոյ մարդկային արժէքներու կարեւորութիւնը...:

Նարոտ Գաբլան- Այս դպրոցը իմ աշխարհայեացքս փոխեց: Ոչ միայն դասերու այլ ընկերային կեանքի մասին շատ բան սորվեցայ: Մեր երկրի ու աշխարհի օրակարգի հանդէպ հետաքրքիր դարձայ:

Քամի Զիգմենտեան- Երբ դպրոց սկսայ շատ մտահոգ էի դասերուն ծանրութեան մասին: Շատ աշխատելով կրցայ յաջողիլ դասերուս մէջ: Երեք տարին շատ շուտ անցաւ: Մտածելակերպս շատ փոխուեցաւ հոս: Հպարտ եմ կեդրոնականցի մը ըլլալէ:



11A

15 Öğrenci

Melani Akay | Alin Güçtaş | Melissa Yirmi | Naira Altunkara | Knar Göçer
Liana Kuyumcuoğlu | Larissa Ilgarlar
Narod Canel | Tila Tüzütürk | Liyana Çalış | Aren Manuk Güllüdere | Saro Ogsar | Daron Erkol | Arden Arslan
Ayk Aram Balci

Sınıf Öğretmeni: Lizet Eren



11B

13 Öğrenci

Sarin Taşhan | Narot Kaplan | Ararat Arapoğlu | Arev Koç | Arek Berç Gökdağ | Kris Havluciyani | Sevan Özşimşek | Tina Jesika Aksoy | Selin Güneş | Daron Davulcu | Dayk Ares Misisoğlu | Beti Pesen | Tamar Kertiş

Sınıf Öğretmeni: Selin Demircioğlu



11D

8 Öğrenci

Melani Konca | Jıptun Galipoğlu
Lara Demir | Arden Boğosyan
Kınar Balci | Arda Cıvanoğlu
Kamer Arda Mesropyan
Aras Sivri

Sınıf Öğretmeni: Dença Çınar



11C

19 Öğrenci

Maral Atınız | Alara Tarakçioğlu
Derev Koç | Burak Raffi Aşçı
Eliza Karapınar | Talya Aşçı
Nadin Berberyan | Kami Çizmeciyan
Tine Dikme | Batuhan Ülker
Garen Daron Ağbulut | Karla Tüzütürk
Minas Koyuncu | Alena Linda Taşköprü
Ara Çiçek | Leon Topal | Aris Balci
Arsen Özkalay | Tayis Toparлак
Roni Çilbıyık | Tamar Demirci
Artun Can Çilbıyıkoglu
Milena Mergel | Janin Arakelyan
Ari İşçi

Sınıf Öğretmeni: Natali Bağdat
Liana Erişsever



Խօսնակ՝ Տայթ Միսիստոլլու
Լուծիքա՝ Արել Կարեան

ՄԱՏԱՂՈՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԻՐՈՅ ՍԵՂԱՆ (15.01.2017)

Կեդրոնականը այս տարի կը թեւակոխէր իր 130-ամեակին: Այո, 130 տարիներ վառ պահել օճախ մը, նուիրուած՝ մարդ կերտելու գործին:

Ովքեր եկեր, ովքեր անցեր էին այս օրհնեալ տանիքէն, օրհնուած էր ան նախ իր հիմնադրին՝ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի հոգով...

15 Յունուարին Գումգաբու Պեգճեան Ամիրա Սրահին մէջ Կեդրոնականի ի նպաստ սարքուած Սիրոյ Սեղանին կը վերյիշուէին կեդրոնականի երեցները, որոնք փառք ու պատիւ բերեր էին իրենց վարժարանին՝ Կեդրոնականին...

Սիրոյ Սեղանին գեղարուեստական բաժինը կը սկսեր ինճոյթի երգով: Ապա՝ օօճֆ փուռֆ ընելով գաւազանին կռթնած կ'երեւար Լուծիքայի կերպարով Կեդրոնականի նախկին սան, ապա թատրոնի բարձրագոյն ուսում ստացած Արել Կարեան...

Լուծիքա- Սպասէք պէ՛ ճանըս, էս ծեղի պէս կ'ենճ ու կանանչ չեմ, էս ալ իմանալ կ'ուզեմ խօսածներնիդ, հե՛մ էս ալ ըսելիքներ ունիմ, խապարներ պէրած էմ անդէնականէն...

Խօսնակ- Բայց ինչ, ծայն մը կ'իմանամ... (Զայնը կը մօտենայ...)

Հասան մեր Լուծիքան է եղեր, ՚րոր տեղերն էք Տիկին Լուծիքա, ձեր անունը այնքան շատ իմացանք, որ ծանօթանալ կ'ուզէիք ձեզի հետ:

Լուծիքա- Այո՛ր, այո՛ր մանչս էս էմ... Է աֆէրին կեզի, ընծի ճանչցար... Ընծի պիլէ տրվընցուցեր էն քեզ, մեր հայ տարրոցները... Ծառքս ալ սա պօրօզանը պըրընըցուցին մերինները... հոն հիմակ շատ խալապալըխ կ'ըլլայ, ծանրդ ծունդ չիմացուիր ըսին...

Իմացայ քիմ ասոր ա Կեդրոնականիս մատաղը կայ էղեր, քեք ալ աչքս չառաւ, ամա նէ տէ օլսա Պատրիարք Վարժապետեանիս հրամանովը պացուած, ասկան մարդ մարդասանք հասծուցած ազգին մէկ օճախն է ըսի, հե՛մ ա մատաղներուն էն վերջինը կ'ըլլայ էղեր, բոլորին տեղը պարիմ անոր էրթամ ըսի... Մերին անդիի թարաֆէս ալ շատ ըսրար ըրին, Լուծիքա՛մ իլլա քի տուն պիտի էրթաս տէլիմ... Է հիմա որ մէկը կտորես, ամենքն ալ քելլի ֆելլի մարդեր...

Ինչ տուտ խօսիմ տեղ մը ծառքդ ալ պարապ չերթուիր ես, հէլէ քիմ ասանկ օրով... Սաղ ըլլան, ատոր ալ հասան խըզըրի պէս... Լուծիքաս, տուն հոգ մըներ, կաղանդը նոր անցաւ, մեր հին ուսույով մէյմէկ կաղանդէք մը կը գրենք կ'ըլլայ, կ'երթայ ըսին... Արդէն, մենք ատանկ մարքա նուէրներ ալ առնել չիտենք քի. հէլէ ադ պէկէսաեարը, այլիաթ ըսուածը, մարթ ֆօն ըսուածը հէչ չենք տեսած...

Քա անչափ ալ շատ կեդրոնականի գրոց բրոց, մարդ հաւաքուեր էն քի հոն, պէլքի ալ հոստեղիներէն շատ էն... չի կրցայ ամենուն կրած մաղթանքներն ալ ելիքլենմիշ ըլլալ տէ պերել պիլեմ...

Հիմա անկանչնիս անոնց տանք, նայինք մեզի ինչեր պույուրմուշ ըրեր էն իրենց դպրոցին, կեօկիւ զենկին Կեդրոնականին համար:

-Ո՛ր մէկէն սկսիմ հիմա, հասան Ներսէս Պատրիարքս կիւճէնմիշ չըլլայ, Է՛ն տէ ըլլայ իր հիմնած վարժարաննէ...

Հատի հիմա ալ էն կենճերէն մէկը զատենք...

- Սամաթիացի Կարպիս Ծանծիկեան բանաստեղծս...

- Ուսուցիչ, գրող Գեղամ Զերովբեան-Իշքօլս նայինք ի՛նչ կ'ըսէ...

- Ճարտարապետ Ստեփան Արա Արաթանս ալ կործի մարդ առած ատենը նախ չախույով մատիտը տաշել կու տայ տէ ատանկ կ'առնէ էղեր...

- Լեզուաբան Հրաչեայ Աճառեանս ալ մեր սօսպէթներուն միշտ կ'ըսէ քիմ, արմատական բառարանը գրելու, Կեդրոնականի 6-րդ դասարանին սկսեր է, ձեռատետրին մէջ կը նօթագրէ էղեր ինչ որ իմանայ, ամմա ուսուցիչներն ալ առաջնորդեր էն ինքը...

- Բանաստեղծ Վահան Թէքեանն ալ, շատերուն նման հե՛մ աշակերտ հե՛մ ալ ուսուցիչ էղեր Է Կեդրոնականիս մէջ...

- Հայկազուն Գալուստեանս ալ օրթա եաշըր գարակեօզեանցիներէս շատեր յիշելու էն... հե՛մ բանաստեղծ, հե՛մ ալ հսկիչ էր Գարակեօզեանիս մէջ...

- Բժիշկ, ուսուցիչ, գրող, ազգային գործիչ մշեցի Պաղտասար Մանուէլեանս ալ հոգին կուտար մշեցիներուն համար, անոնց գործողութիւններն ալ պետաւայի կ'ընէր մեր ազգայինին մէջ...

-Ա՛խ ո՛վ չի ճանչնար կեփէկէնճեճիկ հողը մտած բանաստեղծ Միսաք Մեծարենցը Կեդրոնականի հետ տարեկից, եանիմ հայրուրերսուն տարեկան...

-Հապա՛մ գիւղագիր Յակոբ Մնճուրին, ինքն ալ Մեծարենցին պէս Ակնցի, ինքն ալ Կեդրոնականի հետ տարեկից, եանիմ հայրուրերսուն տարեկան...

Մէկ հատ մըն ալ կարդանք տէ վերջացնենք աս ֆասըրը շատ ալ ուշ չմամ, հիմա չորս աչկով ընծի կը սպասեն կեդրոնականիցներս...

-Ա՛յո՛ հայութեան փարիզի դեսպանը նկատուող գրագէտ Արշակ Զօպանեանս...

Լուծիքա- Ալ բանի փարա հաւաքեցիք նէ ալ հաւաքեցիք... հայտէ մաք պարով ծեգ... մէկալ անգամ ալ մագածները կը կարդամ... Աստուած ծեգի պահէ պահպանէ տէ սահապ ըլլաք մեր դպրոցներուն, եկեղեցիներուն...

Ի՛նչ ըսեմ, յիշեցէք մեզ, ձեր նախնիները, հիչ չէ նէ անոնց խաթերը համար ձեր դպրոցները պահեցէք պահպանեցէք, հէլէ քիմ Կեդրոնականիս պէս զօրու կէշմիշ ունեցող մը... Կ'իմանամ հիմակ ալ ամմենն խալապալըխ լիսէն է էղեր...

Կիտեմ կիտեմ ձեր արմատները սաղլամ էն ատանք իօլայ իօլայ պան մը չըլլար ծեգի... ինչպէս քիմ արմատը սաղլամ եղող ծարը չի չորնար, ֆիլիզլենմիշ կ'ըլլայ տեղէ մը... իշտէ տուք ալ ադ ֆիլիզներէն էք...

Սաղլըխով, պերէքթով մաք պոլորդ ալ...

ՊԱՏԳԱՄՆԵՐ ԱՆԴԵՆԱԿԱՆԻ ԵՐԵԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆՑԻՆԵՐԷ...

ԿԱՐՊԻՍ ԾԱՆՃԻԿԵԱՆ

Ակնոցներուս ետևէն
Հիմա որ ձեզ կը դիտեն
Կը յիշեն հին օրերը
Սիրուն Կեդրոնականէն
Սուրը ճակտիս ես ծնայ
Միշտ ձեր մտքին մեջ մնայ
Պատգամ մըն ալ այսօր տամ
Ձեր գրպանները հոս մնայ

ՎԱՅԱՆ ԹԵՔԵԱՆ

Մի մոռնաք սա տողերս
Կեանքէն ինձի ինչ մնաց
Ինչ որ տուի ուրիշին
Տարօրինակ այն միայն
Դպրոցս Կեդրոնական
Ազգիս կերտած վարժարան
Հիմը այդպէս դրուեցաւ
Բարերարներ միանան

ՅԱԿՈԲ ՄԱԶՈՒՐԻ

Եկայ Մնծուր լեռներէն
Ղալաթիոյ փողոցներէն
Պատմեցի գիւղն հայրենեաց
Մեր կորուսեալ աշխարհէն
Ինչ է այսօր գաղտնիքը
Հեռացնել չարիքը
Կեդրոնականի հաշուոյն
Շուտ հասցնել բարիքը

ԳԵՂԱՍ ԶԵՐՈՎԲԵԱՆ

Ես հայ լեզուն սիրեցի
Բառարան մը գրեցի
Նպատակ պարզ ու բարի
Ուսում ջամբել հայեցի
Սիրոյ սեղան սարքեր էք
Նստած շուրջ բոլորուր էք
Գիտի՛ն ըմպէք ումպ առ ումպ
Քսակները լայն բացէք

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳԱՆՈՒՍԵԱՆ

Չիս գիտեն ձեզմէ շատեր
Կեանքէն հիւսեցի տաղեր
Աշխարհի թաւալումին
Դեմ կեցայ ես աներեր
Մեզ ջամբեց Կեդրոնական
Արժէքներ բարոյական
Գիտակցութեամբ բաժնելու
Հարստութիւն նիւթական

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Անունս ազնուական
Տոհմանունս Զօպանեան
Ո՛ր կրնայի ուսանիլ
Եթէ ոչ Կեդրոնական
Ֆրանսայէն ձայն կու տամ
Կոչս լուրջ է ոչ տարտամ
Եպետլուի խումբին
Դուք ալ եղէք օգնական

ՍՏԵՓԱՆ ԱՐԱ ԱՐԱԹԱՆ

Սամաթիացի մի գաւակ
Ձեռքես չինկաւ հէջ քանակ
Ճարտարապետ ըլլալու
Վաղուց ունէի փափաք
Բազում շինեցի շէնքեր
Գովքս հիւսեցին շատեր
Կեդրոնականիս համար
Առատ թող բացուին ձեռքեր

ՄԻՍԱԷ ՄԵՇԱՐԵՆՑ

Ախ ըլլայի ըլլայի
Արդեօք ես ուր ըլլայի
Առողջ շունչ մը քաշելով
Կեդրոնական ըլլայի
Եկայ ուստի մատաղին
Բերի ձեզի նուշ կաղին
Սուրբ Լուսաւորչիս համար
Կ'ուզեմ ձեզմէ իւղագին

ՊԱՐՏԱՍԱՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Բժշկապետ էի ես
Սուրբ Փրկիչը աչքիս պէս
Վիրաբուժութեամբ ճարտար
Կեանք փրկեցի պէս պէս
Թէ ուսուցիչ եւ թէ սան
Վայելեցի այդ օրրան
Իմ Մշեցիք փող տուէք
Թող ապրի Կեդրոնական

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌԵԱՆ

Ի ծնէ Սամաթիացի
Ես ինչերու տոկացի
Սա հայերէնիս համար
Ֆնտըրի ֆըստըրի ծախեցի
Գիշեր ցերեկ տքնեցայ
Լեզուիս արմատը գտայ
Շունչ տուաւ Կեդրոնական
Դուք ալ տուէք ձեր լուման



Ինամակալութեան Յուշապնակը Մատաղի Յանձնախումբի Նախագահ Հայկ Ասլանեանին



Դրուագներ Սիրոյ Սեղանէն (Պեզճեան Ամիրա Սրահ - Գումգաբու, 15.01.2017)

ՄԵՆՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ Ժ. ԴԱՍԱՐԱՆ

Մերի Գարապուրուն- Տարին շուտ անցաւ բայց լաւ որ լմացաւ որովհետեւ հանգչիլ կ'ուզեմ: Դասէ դուրս մասնակցած ընկերային ձեռնարկները իմ ինքնութեանս ու նկարագրիս շատ մեծ ազդեցութիւն ունեցան:

